

Մնաց մէկը միայն, հուժկու, փաշալանջ,  
Կոխ էր մղում, կոխ անմահանջ:

.....

Բաֆֆի անունը այնքան է սերտ կապուած  
յեղափոխութեան դադափարին հետ, որ անգամ  
չինականի պարզ, անմեղ երգը — անոր յորի-  
նած — ստէպ կը հասկցուէր փոխարեւական  
իմաստով, կը մեկնարանուէր, որպէս մարտա-  
կոչ մը: Այդպէս Հասօի այս սիրուն տաղը.

Դէ՛, փաշեցէ՛ք սիրուն եզներ  
Յառա՛ջ տարէ՛ք արօրը:  
Վարը վարեմէ՛ք, ակոս փորեմէ՛ք,  
Խո՛ր ակուններ հողի մէջ,  
Սերմը ցանեմէ՛ք, որ հուսմէ՛ք հնձեմէ՛ք  
Ցորեան դիզեմէ՛ք կալի մէջ...

Երբ 1890-ին մեր Զաւարեանը կը ձերբա-  
կալուէ Տրապիզոնի մէջ եւ խուզարկութեան  
ատեն կը գտնեն թուր «Կայծեր»էն հանուած  
այդ ոտանաւորը, դատաւարութեան ատեն  
թուրք դատախազը կը յայտարարէ, թէ ինքը  
լաւ է հասկցեր, որ «արօրը» հայոց ազատու-  
թեան դատն է, իսկ «եզները» ջան ֆեդայիներ-  
ը...

\* \* \*

Երբ մըն է արդէն Բաֆֆիի արձակը, որ  
տեղ-տեղ նոյնիսկ կը դառնայ ռիթմային, —  
ոտանաւորի պէս հնչեղ, ախորժալուր: Գրելու  
ատեն ստէպ, կարծէք, յուզմունքէն եւ խան-  
դավառութենէն զինովցած, բանականութիւ-  
նը յետ կը քաշուի, զիջելով իր տեղը ենթագի-  
տակցութեան խաղերուն, ներշնչումին, intu-  
ition-ին... Այդ վերջինն արդէն Բաֆֆիի տի-  
րական յատկանիշներէն մէկն է, որ լոյսի  
հզօր ցոլքերով կ'անցնի անոր հսկայ եւ արե-  
ծօտի գրականութեան մէկ ծայրէն միւսը...

Ահա արձակ բանաստեղծութեան — կ'ըսէի  
նոյնիսկ՝ արձակ-ոտանաւորի — նմուշ մը  
«Կայծեր»էն.

Հեղինակը կը պատմէ առասպելը Ս. Յա-  
կոբ Մծբնայ հայրապետի մասին եւ մէկէն ի  
մէկ հանգարտ զրոյցի թելը կը կտրուի ու տե-  
ղի կուտայ բարձր, ռիթմային թռիչքներու.

... «Ծովը կատալեց, գոռաց, փրփրեց,  
եւ իր փեթից իսկոյն դուրս վազեց: Շէն ու

շինուքիւն, արտ ու անդաստան, բոլորը կո-  
րան, ջրառոյգ եղան: Երկինք պղնձացաւ, անձ-  
րել չը տուեց, երկիրն ամլացաւ, էլ ջուր չը  
բոխեց: Ծառն ու ծաղիկը, խոտն ու բուսը,  
նախն ու նարակը, անխոնջ մշակի վարն ու  
վաստակը, — բոլորը երաշտից այրուեց, ցա-  
մաքեց: Նրանցից յետոյ սովը մէջ մտաւ եւ իր  
ետեւից ժանտախտը բերաւ: Անգութ հնձորը  
հնձեց, տապալեց եւ դիակներով երկիրը ծած-  
կեց: Գայլն ու բորենիին, անգղն ու արծուին,  
ագատ, աներկիւղ քափառում էին մի գիւղից  
միւս գիւղ եւ լափում էին անքաղ դիակներ»...

Գեղեցիկ է բառերու այդ շատրուանը:  
Խօսքը, որ քիչ առաջ քայլամոյրը կը ձեմէր,  
մէկէն ի մէկ կը սկսի պարել ու թռչկոտիլ...  
Ա՛հ, կարգ մը երիտասարդ բանաստեղծներ —  
առուելապէս «ոտանաւորի բանաստեղծ»նե-  
րէն — վերէն վար կը նային Բաֆֆիներու եւ  
Ահարոնեաններու վրայ, վասնզի անոնք մի-  
տում tendance կը դնեն իրենց գրուածք-  
ներու մէջ եւ քաղաքականութիւն կը մղեն:  
(Մենք զիտեցինք այդ երեւոյթը 1916 թուին,  
երբ սկսուեցաւ բուռն բանավէճ մը Թիֆլիսի  
«Հորիզոն»ին մէջ, կարծեմ Բրիւսովի գրքին  
առթիւ): Իրենք «խակական», զտարիւն բա-  
նաստեղծներն են, որ կը դաւանին ծանօթ ըս-  
կըզրուէքը. «Արուեստը-արուեստի համար»:  
Անգամ անոնք, որ իրենց կեանքի մէջ հազիւ  
թխած են քանի մը կաղլիկ ոտանաւորներ, եր-  
բեմն տեսակ մը արգահատանքով կը խօսին  
արձակագիր հեղինակներուն վրայ:

Ձեն ըմբռներ, որ Բաֆֆիին արուեստագէտ  
ու ստեղծագործող մըն է, խօսքի արտիստ մը՝  
ոչ միայն իր միտումնաւոր վէպերու, այլ եւ  
ամբողջ հրապարակագրութեան մէջ: Ձեն ըմ-  
բռներ, որ ընտիր ձևը ինքնին արդէն արուեստ  
մըն է, ստեղծագործութիւն մը եւ որ անո՞՞  
զրոյցները գրչի պարզ արհեստաւորներ են մի-  
այն:

Գերազանցապէս քնարական է «Սամուէլ»ի,  
«Խենթ»ի, «Կայծեր»ի, «Դաւիթ Բէկ»ի, այլ եւ  
Մելիքզատէի «Մշակ»եան յօդուածներու ոճն  
ու լեզուն: Քնարականութիւնը, լիբիզմը յոր-  
դացող հեղեղի մը պէս, կ'ողողէ գրական դոր-  
ծունէութեան բոլոր մարզերը: քնարերգակ մըն  
է, բանաստեղծ մը — նաեւ Բաֆֆի — պատմա-